

ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ

ՄՀԵՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
(1939-2013)

Պատմաբան Միեր Կարապետեանը ծնուել է 11 Դեկտեմբեր 1939ին Երեւանում, ուսուցչի ընտանիքում: 1962ին աւարտել է Խաչատուր Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Ինստիտուտի (ՄԻ) Պատմալեզուագրական Ֆակուլտէտը, որից յետոյ աշխատել է Հոկտեմբերեանի շրջանի Զանֆիդայի միջնակարգ դպրոցում:

1964ին ընդունուել է Մանկավարժական Ինստիտուտի ասպիրանտուրան՝ հայոց պատմութեան գծով: 1967-1975՝ աշխատել է իբրեւ ՄԻ գիտական քարտուղար: 1972ին՝ «19րդ Դարի Երկրորդ Կէսի Հայ Ազգային-Ազատագրական Շարժման Պատմագրութիւնը» թեմայով պաշտպանել է ատենախօսութիւն: 1975-1995՝ եղել է նոյն հիմնարկի Հայոց Պատմութեան Ամբիոնի դոցենտ: 1996ին՝ «Հայոց Յեղասպանութեան Պատմագրութիւնը» թեմայով պաշտպանել է դոկտորական, այնուհետեւ ստացել պրոֆեսորի կոչում: 1997ից մինչեւ իր մահը ՄԻ Հայոց Պատմութեան Ամբիոնի վարիչն էր:

Հեղինակ է շուրջ 100 գիտական եւ ուսումնամեթոդական աշխատանքների, որոնցից 10ը՝ մենագրութիւններ եւ ուսումնական ձեռնարկներ: Նրա գիտական ուսումնասիրութիւնները վերաբերում են հայ ազգային-ազատագրական շարժման եւ Հայոց Յեղասպանութեան պատմութեան եւ պատմագրութեան հարցերին:

Առանձին հատորներով Երեւանում լոյս են տեսել նրա *19-րդ Դարի Երկրորդ Կէսի Հայ Ազգային-Ազատագրական Շարժման Պատմագրութիւնից* (1987), *Հայոց Մեծ Եղեռնը Պատմագրութեան Մէջ* (1993), *Հայոց 1915-1916 Թուականների Յեղասպանութեան Հարցերը Հայ Պատմագրութեան Մէջ* (1998), *Հայաստանը 1912-1920 Թուականներին* (2003), *Հայոց 1915-1916 Թուականների Յեղասպանութեան Հիմնահարցերը Յետխորհրդային Հայ Պատմագրութեան Մէջ* (Ա. Հտր., 2005) եւ *Հայոց Մեծ Եղեռնի Պատմութեան Հիմնահարցերը Հայ Պատմագրութեան Մէջ* (2010) աշխատութիւնները:

Կարապետեանի ղեկավարութեամբ թեկնածուական են պաշտպանել բազմաթիւ ասպիրանտներ եւ հայցորդներ: Նա սիրուած դասախօս էր, ուսանողների եւ դասախօսների համար՝ ջերմ գրուցակից: Կարապետեանը Մանկավարժական Համալսարանի եւ ՀՀ ԳԱԱ Պատմութեան Ինստիտուտում գործող ԲՈՀի հայոց պատմութեան մասնագիտական խորհուրդների անդամ էր: Երկար տարիներ ղեկավարել է Մանկավարժական Համալսարանի Գիտական Խորհրդի

Գիտական եւ Ուսումնամեթոդական Հարցերի Յանձնաժողովի աշխատանքները:

Պարգևատրուել է Մովսէս Խորենացու, Խաչատուր Աբովեանի մեդալներով, Ֆրիտիոֆ Նանսէնի յուշամեդալով:

Միեր Կարապետեանը մահացաւ 21 Հոկտեմբեր 2013ին, Երեւանում:

Խ. Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի Հայոց Պատմութեան Ամբիոն



ՄԱՐԳԱՐԻՏԱ ԵԱԽՈՆՏՈՎԱ
(1935-2014)

Թատերագէտ Մարգարիտա Բորիսի Եախոնտովան ծնուել է 2 Յուլիս 1935ին, Լենինգրադում (այժմ՝ Սանկտ Պետերբուրգ): 1956ին աւարտել է Լենինգրադի Պետական Համալսարանի իսպաներէնի բաժինը: 1965ին տեղափոխուել է Երեւան, որտեղ աշխատակցել է *Գրական Թերթ*, *Կոմունիստ*, *Կոմսոմոլէց* եւ այլ թերթերի: Աւելի քան 50 տարի աշխատել է հայկական եւ ռուսական թատրոններում:

1971ից աշխատել է Երեւանի Կ. Ստանիսլաւսկու Անուան Ռուսական Պետական Դրամատիկական Թատրոնում, 1982-1989՝ Երեւանի Դրամատիկական Թատրոնում նախ որպէս գրական մասի վարիչ, ապա՝ Հրաչեայ Ղափլանեանի եւ Ա. Ասլամազովի հետ համատեղ եղել է Բարեկամութիւն Թատրոնի հիմնադիրն ու գեղարուեստական ղեկավարը, կազմակերպել համաշխարհային ճանաչում ունեցած թատրոնների երեւանեան հիւրախաղեր: 1985ից համատեղութեամբ աշխատել է Երեւանի Գ. Սունդուկեանի Անուան Ազգային Ակադեմիական Թատրոնի գեղարուեստական ղեկավարի օգնական: Եղել է Հայաստանի Թատերական Գործիչների Միութեան քարտուղար: Նրա գրախօսականները, հայ մշակոյթի գործիչների դիմանկարները, վերլուծական յօդուածները լոյս են տեսել հեղինակատր թերթերի եւ հանդէսների էջերում: Հեղինակել է երկու գիրք, որոնցում վերարտադրել է բեմադրական եւ դերասանական աշխատանքները, տուել առարկայական գնահատականներ: 2006ին արժանացել է Հայաստանի Արուեստի Վաստակավոր Գործչի կոչման:

2007ին լոյս է տեսել Եախոնտովայի *Alexander Samsonovic Grigorian* մենագրութիւնը, 2008ին՝ *Teatr Nashej Zhizni: Gosudarstvennomu Ordenu Druzby Narodov Russkomu Dramaticheskomu Teatru Imeni K. Stanislavskogo 70 Let* (Մեր կեանքի թատրոնը. Ժողովուրդների Բարեկամութեան շքանշանակիր Կ. Ստանիսլաւսկու Անուան Թատրոնը

70 տարեկան է) (համահեղինակ՝ Ալեքսանդր Գրիգորեան, Երկուսն էլ՝ Երեւան): Դստեր՝ Սունդուկեանի անուան թատրոնի դերասանուհի Մարիաննա Մխիթարեանի հետ ռուսերէն է թարգմանել ֆրանսահայ գրող Մովսէս Պէպքեանի *Լուսաւոր Աչքերով Օտարականը* վէպը (Երեւան, 2003):

Մարգարիտա Եախոնտովան մահացել է 30 Յուլիս 2014ին, Երեւանում: <<<



ՎԱԿԻՄԻՐ ՂԱԶԱԽԷՅԵԱՆ
(1926-2015)

Պատմական գիտութիւնների դոկտոր Վլադիմիր Նահապետի Ղազախէցեանը ծնուել է 1926 Փետրուարի 11ին Ղարաքիլիսա գիւղաքաղաքում (այժմ՝ Վանաձոր): 1944-1949՝ սովորել է ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտետում: 1949-1952՝ ուսանել է Հայկական ԽՍՀ ԳԱ ասպիրանտուրայում՝ ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսեանի ղեկավարութեամբ: 1953ին պաշտպանել է թեկնածուական, իսկ 1976ին՝ դոկտորական՝ Հայաստանի գիւղացիութեան պատմութեան վերաբերեալ: Պրոֆեսորի կոչում է ստացել 1982ին:

1953-1959՝ դասաւանդել է Երեւանի Պոլիտեխնիկական Ինստիտուտում: 1959ին աշխատանքի է անցել ՀԽՍՀ ԳԱ Պատմութեան Ինստիտուտում, սկզբում որպէս ասագ գիտաշխատող, այնուհետեւ՝ 30 տարի շարունակ (1980-2010) որպէս Նորագոյն Պատմութեան բաժնի վարիչ: 2010-2015՝ զբաղեցրել է գլխաւոր գիտական աշխատողի պաշտօնը: Համատեղութեամբ դասաւանդել է Երեւանի Գիւղատնտեսական Ինստիտուտում, նաեւ՝ Երեւանի Քուանտ վարժարանում:

Ղազախէցեանը եղել է մեծ թուով ասպիրանտների գիտական ղեկավար: Երկար տարիներ հանդիսացել է Պատմութեան Ինստիտուտի Գիտական Խորհրդի եւ Ինստիտուտում գործող ԲՈՀԻ Մասնագիտական Խորհրդի անդամ, խմբագրել տասնեակ գրքեր: Պատմութեան Ինստիտուտի Նորագոյն Պատմութեան բաժինը ղեկավարելու տարիներին բաժնի գիտաշխատողներն ու ասպիրանտները մշակել են Նորագոյն ժամանակաշրջանի պատմութեան բազմաթիւ թեմաներ, պաշտպանել թեկնածուական ու դոկտորական ատենախօսութիւններ:

Անկախ պետականութեան հաստատման շնորհիւ փակ արխիւային ֆոնդերի բացումը լայն հնարաւորութիւններ ստեղծեց պատմական գիտութեան զարգացման համար: Ղազախէցեանը առաջիններից էր, որ նուիրուեց ուսումնասիրելու եւ գիտական շրջանառութեան դնելու

խորհրդային պետանվտանգության մարմինների, դատախազության, Արտաքին Գործերի Նախարարության եւ արխիվային այլ ֆոնդերի փաստաթղթեր, որը մեծապես բարձրացրեց պատմական իրականության ամբողջական լուսաբանման մակարդակը, ինչպես նաեւ հետաքրքրությունը՝ պատմական գրականության նկատմամբ:

Տիրապետելով արխիվանիւթերի՝ Ղազախէցեանի գիտական գործերն աչքի են ընկնում փաստաթղթերի եւ նիւթերի հարստութեամբ, դրանցից բխող ընդհանրացումներով ու եզրակացութիւններով:

Ղազախէցեանի գիտական գործունէութեան արդիւնքներն ամփոփուած են նրա շուրջ 30 գրքերում եւ 100ից ատիւ յօդուածներում: Նա մասնակցել է ակադեմիական *Հայոց Պատմութիւն* նոր բազմահատորեակի չորրորդ հատորի (1918-1991) ստեղծման գործին, որի առաջին գրքի խմբագիրը եւ բնագրերի զգալի մասի հեղինակն է: Նա առաջինն է հանրապետութիւնում դպրոցական դասագրքերի համար մշակել *ՀՀ* (1918-1920) եւ Խորհրդային Հայաստանի առաջին տասնամեակների պատմութիւնը:

Ղազախէցեանի գիտական գործունէութեան մէջ կարեւոր տեղ ունէր աղբիւրագիտական բնոյթի գրքերի ու յօդուածների տպագրութիւնը: Եզակի են խորհրդային իշխանութեան պայմաններում (1920ականներ եւ 1930ականների սկիզբ) *ՀԶԴ* կազմակերպութիւնների դրութիւնը եւ դրանց դէմ Կոմունիստական Կուսակցութեան պայքարին նուիրուած փաստաթղթերի ժողովածուի (*Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ Խորհրդային Իշխանութիւնը*) հրատարակումը (1999) եւ այլ բազմաթիւ գործեր: *Հայաստանի Հանրապետութիւնը 1918-91920 թթ.* փաստաթղթերի ժողովածուն (2000), որի պատրաստող խմբի ղեկավարը եղել է Ղազախէցեանը, կարեւոր աղբիւր է *ՀՀ* պատմութիւնն ուսումնասիրողների համար:

Ղազախէցեանը անդրադարձել է հայ ազատագրական շարժման ակա-նաւոր գործիչ ու տեսաբան Գարեգին Նժդեհի գործունէութեան ուսումնա-սիրութեանը (Նժդեհի երկերի երկհատորեակ, մարտական հրամաններ, Զանգեզուրի ինքնապաշտպանութիւն են.), Եղիշէ Զարենցի, Ակսէլ Բա-կունցի, Աւետիք Իսահակեանի կեանքի ու գործունէութեան անյայտ էջերի լուսաբանմանը: Նրա համար ուսումնասիրութեան առանձին բնագաւառ է եղել արխիւներում յայտնաբերուած գիտական աշխատութիւնների տպագ-րութեան նախապատրաստումը: Այդպիսի գործերից յիշատակութեան արժանի են Աստուածատուր Խաչատրեանի *Արեւելահայ եւ Թուրք Դիւանագիրական Յարաբերութիւնները* (2010), Միքայէլ Թումանեանի *Հայաստանի Հանրապետութեան Դիւանագիրական Պատմութիւնը 1918-1920 թթ.* (2012, ուսերէն) գրքերը: Գիտական գործունէութեան երկարամեայ աշխատանքի արդիւնք է Ղազախէցեանի *Հայաստանը 1920-1940 թթ.* (2006) արժէքաւոր ուսումնասիրութիւնը:

2011ին պարգևատրուել է Մովսէս Խորենացու մեդալով:
Վլադիմիր Ղազախեցեանը մահացաւ 3 Մարտ 2015ին, Երեւանում:

<<<

ԲԱԲԿԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
(1925-2015)

Թատերագէտ, արուեստագիտութեան դոկտոր Բաբկէն Բարեղամի Յարութիւնեանը ծնուել է 2 Փետրուար 1925ին, Երեւանում: 1949ին աւարտել է Երեւանի Թատերական Ինստիտուտի թատերագիտական բաժինը: 1954ից աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Արուեստի Ինստիտուտում:

Երեւանում հրատարակուել են Յարութիւնեանի *Հայ-Ռուսական Թատերական Կապերը. Համառօտ Ակնարկ* (1955, նոյնը 1956ին՝ ռուսերէն), *Ռուսական դրամատուրգիան խորհրդահայ բեմում* (1957, ռուսերէն), *Արմէն Գուլակեան. Կեանքի եւ Սրտեղծագործութեան Տարեգրութիւն, 1899-1960* (1985), *Հայ Խորհրդային Թատրոն. 1917-1977* (1985), *Դարաշրջանը եւ անհատականութիւնը. Ռուբէն Զարեան. ծննդեան 100ամեակի առթիւ* (2010, ռուսերէն), *Յովհաննէս Աբէլեան. Կեանքի եւ Սրտեղծագործութեան Տարեգրութիւն, 1865-1936* (1987), *Վահրամ Փափագեան. Կեանքի եւ Սրտեղծագործութեան Տարեգրութիւն, 1888-1968* (2012), *Պետրոս Աղամեան. Կեանքի եւ Սրտեղծագործութեան Տարեգրութիւն, 1849-1891* (2013) աշխատութիւնները, ինչպէս եւ խորհրդահայ թատրոնի պատմութեան՝ Խորհրդային դրամատիկական թատրոնի պատմութիւն բազմահատորեակում (1966-1969, ռուսերէն, վեց հատորով): Կազմել է Սուրէն Խաչատուրեան (1969, ռուսերէն), *Արմէն Գուլակեան* (1979), *Ռուբէն Զարեան* (1980) ժողովածուները, *Սունդուկեանի Անուան Թատրոն. 1922-1982* ալբոմը (1989): Հայ թատերագիտութեան մէջ մեծ ներդրում են *Սովետահայ Թատրոնի Տարեգրութիւն* (գիրք 1-2, 1961-1969) եւ *XIX-XX դդ. Հայ Թատրոնի Տարեգրութիւն* եռահատոր աշխատութիւնները (1980-1981), որոնք ընդգրկում են 1801-1920ին՝ հայ ժողովրդի թատերական արուեստի փաստական պատմութիւնը: Եղել է Մոսկուայի *Թատերական Հանրագիտարանի* (1961-1967, հինգ հատոր) գիտական խորհրդատու եւ հայ թատրոնին առնչուող բազմաթիւ յօդուածների հեղինակ: 1970ին արժանացել է արուեստագիտութեան դոկտորի աստիճանի:

1990ականներին տեղափոխուել է Մոսկուա, որտեղ 2012ին «Գումանիտարի» Հրատարակչութիւնում լոյս է ընծայել ԺԹ.-Ի. դարերի հայ թատրոնը աշխատութիւնը (ռուսերէն):

Բաբկէն Յարութիւնեանը մահացաւ 27 Ապրիլ 2015ին, Մոսկուայում:

<<<

ՅԱԿՈՐ ԽԱՉԻԿԵԱՆ
(1931–2015)

Գրող, լեզուաբան եւ թարգմանիչ Յակոբ Ճէք Խաչիկեանը ծնուել է Ստամբուլում, 25 Նոյեմբերի 1931ին: Յաճախած է Ստամբուլի Ռուպերթ եւ Նիւ Եորքի Քուինզ քոլէջները: Փիլիսոփայութեան դոկտորի կոչում է ստացել Մոնրէալի Համալսարանից: 1957ին հաստատուել է Կանադայի Քեբէկ քաղաքում: Դասաւանդել եւ ուսումնական գծով դեկանի պաշտօն է զբաղեցրել Աէն ժանի Արքայական Զինուորական Քոլէջում, Շերբուրգի Համալսարանում: Աշխատակցել է *Sun*, *Ժամանակ*, *Մարմարա*, Մոնրէալի *Ապագայ* եւ *Հորիզոն*, Նիւ Եորքի *Ararat*, Բոստոնի *The Armenian Mirror Spectator*, *Armenian Weekly* պարբերականներին:

Հեղինակ է գրական եւ լեզուաբանական ուսումնասիրութիւնների նուիրուած աւելի քան 30 գրքերի, որոնցից ամենածաւալունն ու ամենաարժէքատուրը Գաբրիէլ Պասմաճեանի, Էդուարդ Ֆրանչուքի եւ Նուրիան Ուզունեանի համահեղինակութեամբ *The Heritage of Armenian Literature* եռահատոր աշխատութիւնն է: Հայերէնէ եւ թրքերէնէ թարգմանութիւններ կատարած է ֆրանսերէն եւ անգլերէն: Հին անգլերէնի վերաբերեալ հետազօտութիւն է կատարել Լոնդոնի Բրիտանական Թանգարանում, հրատարակել է *Անգլերէնը Որպէս Երկրորդ Օտար Լեզու Ուսուցանելու Մեթոդաբանութիւն* գիրքը (1967): Հեղինակ է գրական-լեզուաբանական յօդուածների, «Լեզուագիտական եւ Գրական Վերլուծութիւն Հին Անգլերէն Առարկաների» հատորի, *Թոմաս* (Մոնրէալ, 1969) վէպի՝ Ուիլլըմ Սարոյեանի առաջաբանով: Անոր կրթողային գործերէն կը համարուին «Վաղորդայն Չունեցող Արշալոյսը» եւ «Ամառ Առանց Այգաբաց»ի (համահեղինակութեամբ Ժան Իւ Սուսիի) վէպերը: Վերջինը թարգմանուած է ֆրանսերէն, ռումիներէն, սպաներէն, հայերէն: Հեղինակ է նաեւ *The Young Man in the Gray Suit*, *Unmailed Letters*, *My Ethnic Quest* հատորներուն: Պարգետատրուել է «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով եւ ՀՀ Մշակոյթի եւ Երիտասարդութեան Հարցերի Նախարարութեան ոսկէ մեդալով:

Յակոբ Խաչիկեանն մահացաւ 3 Յուլիս 2015ին Մոնրէալ:

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆԵԱՆ
(1928-2016)

Պատմաբան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Սիմոնեանը ծնուել է 8 Դեկտեմբեր 1928ին, Գորիսում: 1952ին ասարտելուց յետոյ ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտը, վերադարձել է հայրենի քաղաք, ստանձնելով տեղի թերթի պատասխանատու քարտուղարի

պարտականությունները, այնուհետեւ աշխատել է տեղի շրջկոմում իբրեւ հրահանգիչ, բաժնի վարիչ, գաղափարական գծով քարտուղար:

1959-1961՝ ուսանել է Մոսկուայում՝ ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր Հասարակական Գիտությունների Ակադեմիայում, ուր 1961ին պաշտպանել է թեկնածուական: Նրա առաջին մենագրությունը լոյս է տեսել Մոսկուայում՝ «Հայկական ԽՍՀ արդիւնաբերութեան վերազինումը ետպատերազմեան շրջանում, 1945-1950 ԹԹ.» (1961, ռուսերէն) խորագրով:

1961-1966՝ աշխատել է ՀԿԿ Կենտրոնական Կոմիտէին առընթեր Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտի հայկական մասնաճիւղում որպէս աւագ գիտաշխատող, իսկ 1966-1977՝ Կենտրոնական Կոմիտէում զբաղեցրել է տարբեր պաշտօններ: Սփիւռքահայութեանը նուիրուած դոկտորականի հիման վրայ հրատարակել է *Սփիւռքահայութիւնը Սոցիալ-Քաղաքական Պայքարի Ուղիներում* մենագրութիւնը: Մեծ է եղել նրա դերը Մարքսիզմ-Լենինիզմի Ինստիտուտի հայկական մասնաճիւղի տնօրէնի պաշտօնում,



որը զբաղեցրել է 1977-1990ին: Այնուհետեւ՝ 1990-1991 եղել է ՀՀ ԳԱԱ Պատմութեան եւ Տնտեսագիտութեան Բաժանմունքի Ակադեմիկոս-Քարտուղարը, իսկ 1991-1994՝ Սփիւռքահայութեան Հետ Մշակութային Կապերի Կոմիտէի նախագահը: 1994-2006՝ լինելով ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական, նա 1999-2003 ղեկավարել է նաեւ ԵՊՀ Հայոց Պատմութեան Ամբիոնը: 1986ին ընտրուել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, իսկ 1996ին՝ ակադեմիկոս:

Սիւննեանը վարչական աշխատանքը հմտօրէն զուգակցել է գիտահետազօտական բեղմնաւոր գործունէութեան հետ, հեղինակել մեծաթիւ մենագրութիւններ, ինչպէս նաեւ հարիւրաւոր գիտական յօդուածներ եւ մեծապէս նպաստել հայրենի պատմագիտութեան զարգացմանը: Գիտական գործունէութեան սկզբնական շրջանում նա ուշադրութիւնը բեւեռել է գլխաւորապէս սփիւռքահայութեան գործունէութեան եւ Խորհրդային Հայաստանի հանդէպ նրա դիրքորոշման: Այնուհետեւ՝ 1970ականներին, նրա գիտական հետաքրքրութիւնները կենտրոնացել են քաղաքական հիմնախնդիրների ուսումնասիրութեան վրայ: Նրա գրչին են պատկանում *Ինդուստրիալ Հասարակութեան Տեսութիւնները: Քննական Վերլուծութիւն* (1973), *Արդի Բուրժուական Գաղափարախօսութեան Քննադատական Ուրուագծեր*, Գիրք 1-2 (1977, 1980), *Գիտարեխնդրական Յեղափոխութիւնը եւ Նրա Սոցիալական Հետեանքները* (1982) գրքերը:

Աելի ուշ Սիմոնեանը սկսել է մանրակրկիտ ուսումնասիրել հայ ժողովրդի Նոր Դարի Պատմության տարատեսակ կնճոտ հիմնահարցեր, որոնք առնչում են ԺԹ. դարի վերջի եւ Ի. դարի սկզբի հայ ազատագրական շարժումների ու Հայոց Յեղասպանության պատմությանը: *Թուրք Ազգային Բուրժուազիայի Գաղափարաբանությունը եւ Քաղաքականությունը* (1980), *Թուրք-Հայկական Յարաբերությունների Պատմությունից* (1991) գրքերում նա վերլուծել է մասնաւորապէս թուրքիզմի գաղափարախօսութեան առանձնայատկութիւնները, որոնց հիման վրայ իրականացուել է հայ ժողովրդի համատարած բնաջնջումն Օսմանեան Կայսրութիւնում: Այնուհետեւ լոյս է ընծայել մի շարք արժէքաւոր՝ *Անդրանիկի Ժամանակը, Գիրք 1-2*, (1996), *Ազատագրական Պայքարի Ուղիներում, Հտր. I-V* (2003-2013), *Հայերի Զանգուածային Կոտորածները Կիլիկիայում (1909 Թ. Ապրիլ)* (2009), *1912-1913 ԹԹ. Բալկանեան Պատերազմները եւ Հայերը* (2014) մենագրութիւնները: Կիլիկեան կոտորածներին առնչուող նրա գիրքը, որը Հայոց Յեղասպանութեան պատմագրութեան մէջ այս կարեւոր իրադարձութեանը նուիրուած եզակի ուսումնասիրութիւններից է, հրատարակուել է նաեւ անգլերէն թարգմանութեամբ (2012) եւ արժանացել բարձր գնահատականների: Ազատագրական շարժումների պատմութեանը վերաբերող մեծարժէք հինգհատորեակի համար 2013ին նա պարգեւատրուել է ՀՀ պետական մրցանակով:

Սիմոնեանը իր անուրանալի լուման է ներդրել նաեւ արցախեան շարժման մէջ, հանդէս եկել մեծաթիւ հրապարակային ելոյթներով, իսկ 1990-1995՝ լինելով ՀՀ ազգային ժողովի պատգամաւոր, նպաստել է նաեւ Հայաստանի երրորդ Հանրապետութեան ղեկավարութեան ծաւալած գործունէութեանը պատմական բաւական խրթին ժամանակահատուածում:

1964ից իվեր Սիմոնեանը զբաղուել է նաեւ դասախօսական աշխատանքով, դասաւանդել ԵՊՀ Պատմութեան եւ Փիլիսոփայութեան ֆակուլտետներում, ինչպէս նաեւ այլ բուհերում: Կեանքի վերջին տարիներին աշխատելով ԵՊՀ-ում, նա հանդէս է եկել իբրեւ *Հայոց Պատմութիւն* բուհական դասագրքի խմբագիր (2012, ռուսերէն՝ 2014):

Չնայած առաջադիմած տարիքին, Սիմոնեանին զարդարում էին թե՛ անմնացորդ նուիրուածութիւնը պատմական գիտութեանը եւ թե՛ մեծ աշխատունակութիւնը: Նա չէր բաւարարում Երեսնում առկայ՝ իրեն մատչելի գրականութեամբ կամ սկզբնաղբիւրներով: Կեանքի վերջին տարիներին առողջական վիճակի վատթարացման պատճառով նա այլեւս իվիճակի չէր գիտահետազօտական աշխատանքների իրականացման համար մեկնելու այլ քաղաքներ, ուստի Մոսկուա իւրաքանչիւր գիտական գործուղման մեկնելուց առաջ՝ ինձ խնդրում էր իր համար տեղի

գրադարաններում եւ արխիւներում պահուող անհրաժեշտ փաստաթղթեր պատճէնահանել:

Սիմոնեանն աչքի էր զարնում պատմական անցեալի նկատմամբ անկողմնակալ դիրքորոշմամբ եւ անաչառ վերլուծութիւններով: Նա ոչ միայն խիստ ազնիւ էր, այլեւ սկզբունքային ու անշահախնդիր, ինչպէս նաեւ զուրկ էր նուազագոյն իսկ յիշաչարութիւնից: Հրապարակային քննարկումների ժամանակ նա երբեք լռութիւն չէր պահպանում. միշտ գերադասում էր բարձրաձայն յայտնել իր կարծիքները, հակադրուել նոյնիսկ բարձրաստիճան անձանց: Իբրեւ պատգամատուր, նա ազգային ժողովում սուր քննադատութեան էր ենթարկում նաեւ ՀՀ ղեկավարներին:

Չնայած գիտական եւ տարիքային մեծ տարբերութիւններին, գիտական նիստերի ժամանակ նրա հետ կարելի էր հրապարակաւ բանավիճել, առաւել եւս, որ նրա համեստութիւնը երբեք նրան թոյլ չէր տալիս իցոյց դնել իր եւ ընդդիմախօսների միջեւ առկայ զանազանութիւնները: Ըստ այդմ՝ նա բոլորի կողմից վայելում էր մեծ յարգանք:

Սիմոնեանն ինձ հետ ունեցած զրոյցներում անցեալի եւ ժամանակակից պատմաբանների մասին միշտ յայտնում էր անկողմնակալ կարծիքներ: Այդ մասին են վկայում նաեւ նրա՝ *Ինչպէս եղել է...* (Երեւան, 2016) խորագրով յետմահու լոյս տեսած յուշերը: Երբ 2009ին նրան նուիրեցի Աբգար Յովհաննիսեանի՝ իմ լոյս ընծայած անտիպ յօդուածների ժողովածուն, նա անմիջապէս սկսեց կարդալ որոշ հատուածներ եւ շատ բարձր կարծիք յայտնել նրա մասին:

Հրաչիկ Սիմոնեանը մահացաւ 30 Յունուար 2016ին, Երեւանում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ
varuzhan.poghosyan@mail.ru



ՊԵՏՐՈՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
(1944-2016)

Բազմավաստակ պատմաբան, սփիւռքահայ խնդիրներու քաջատեղեակ Պետրոս Յովհաննիսեան ծնած է 22 Յունիս 1944ին Լենինական (այժմ՝ Գիւմրի): Երզնկացի աւանդապահ ընտանիքի մէջ հասակ առնելով, 1962ին կ'ընդունուի ԵՊՀ Պատմութեան Ֆակուլտէտ: Համալսարանի ուսումնառութեան երրորդ տարին աւարտելէն ետք կը զօրակոչուի խորհրդային բանակ, կը ծառայէ ռազմօդային ուժերուն: Զօրացրուելէն ետք, 1967-1970՝ կը շարունակէ ուսումնառութիւնը:

1970ին կ'ընդունուի ԵՊՀ ասպիրանտուրան, կը պաշտպանե՛ «Միջնադարեան Հայաստանի Սոցիալ-Տնտեսական Յարաբերութիւնների Ուսումնասիրութիւնը Յ. Մանանդեանի Աշխատութիւններում» թեկնածուականը:

1975էն մինչեւ մահը ԵՊՀ Հայոց Պատմութեան Ամբիոնէն ներս կը վարէ Բաժնի Վարիչի, պաշտօնատարի եւ դասախօսի պաշտօններ:

Բայցի ԵՊՀէն, Յովհաննիսեան բազմաբնոյթ գիտական գործունէութեան կողքին. իբրեւ մանկավարժ դասաւանդած է Համազգայինի Պէյրութի Հայագիտական Բարձրագոյն Հիմնարկի (1992-1993), Սեւանի Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցի (1995-1999), իսկ 1999էն՝ համատեղութեամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածինի Գեորգեան Հոգեւոր Աստուածաբանական Ճեմարանին մէջ:

Յովհաննիսեան անդամ էր գիտական տարբեր հանդէսներու՝ *Բանբեր Երեւանի Համալսարանի. Հայագիտութիւն, Պատմութիւն եւ Մշակոյթ, Սփիւռքագիտութիւն, Հայագիտութիւնը Դպրոցում, Ակունք* խմբագրական խորհուրդներուն: Մասնակցած է միջազգային գիտաժողովներու՝ Մոսկուա, Մոնփելիէ, Պէյրութ, Սոֆիա եւն.:

Քառասնամեայ գիտական աշխատանքը զուգակցած է դասախօսական-մանկավարժական գործունէութեան, որ ընթացած է չորս հիմնական պատմագիտական ուղղութիւններով: Մանկավարժական բնագաւառէն ներս իր բազմաբովանդակ եւ գիտականօրէն հիմնաւորուած դասախօսութիւններով կլանած է ոչ միայն հայրենի, այլեւ ԵՊՀէն ներս իրենց ուսումը ստացող սփիւռքահայ ուսանողները:

Յովհաննիսեան 400է աւելի գիրքերու, յօդուածներու, ժողովածուներու եւ ակնարկներու հեղինակ է: Իր խմբագրութեամբ լոյս տեսած են ութսունէ աւելի գիտական երկեր:

Ուսանողական եւ գիտական հանրութեան համար մեծ արժէք կը ներկայացնեն Յովհաննիսեանի աշխատակցութեամբ հրատարակուած *Հայ Ժողովուրդի Պատմութեան Քրեւստոմատիա* (Հտր. 1 1981, 2007, Հտր. 2՝ 2011), *Ամենայն Հայոց Կաթողիկոսներ* (2001), *Հայ Եկեղեցու Հանրագիտարան* (Պրակ Ա., 2008), *Նշանաւոր Ճեմարանականներ* (Պրակ 1-2, 2005-2009) գիրքերը, *Հայ Ազգայագրական Շարժումները (XV Դարերի կէս-XVIII Դարի Վերջ)* (2010) դասախօսութիւններու ժողովածուն:

Հրատարակած է Աշոտ Յովհաննիսեանի *Պատմագիտական Ուսումնասիրութիւնները*, Աւետիս Պէրպէրեանի *Պատմութիւն Հայոցը*, Կ. Տէր Մկրտչեանի *Հայոց Եկեղեցու Պատմութիւնը* (Մաս Ա., 2011), Յակոբ Զօրեանի *Պատմագիտական Ուսումնասիրութիւնները* եւն.:

Հայագիտութեան իր մեծ ներդրումը եղաւ մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադոնցին աշխատասիրութիւններու հրատարակումը, բաղկացած՝ 60 յօդուածներէ եւ հրապարակումներէ:

Յովհաննիսեան տարիներու բարեկամն ու աշխատակիցն էր
Հայկազեան Հայագիտական Հանդէսին:

Գիտամանկավարժական բեղուն գործունէութեան համար պարգեատրուած է կառավարական շնորհակալագիրերով եւ պատուօգիրերով, արժանացած է «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանին:

Զինք ճանչցած եմ իբրեւ դասախօս, ղեկավար, խորհրդատու, խմբագիր եւ ասանդապահ հայ մարդ:

Մարդը գնայուն է, իսկ գործը՝ մնայուն: Մնայուն են ու կը շարունակուի մնալ Պետրոս Յովհաննիսեան անունը, անոր գործը, խօսքն ու գաղափարները:

Պետրոս Յովհաննէսեան մահացաւ 22 Փետրուար 2016ին:

ԱՆԻ ՖԻՇԵՆՔՃԵԱՆ
fishenkjianani@hotmail.com

ԶՈՆ ԳՐԵՊԻՆ (1937-2016)

Լեզուաբան Զոն Ա. Ք. Գրեպինը (John A. C. Greppin) ծնուել է 2 Ապրիլ 1937ին, Նիւ Եորք Նահանգի Ռոչեսթըր քաղաքում: Ուսանել է Ռոչեսթըրի Դարթմութ քոլէջում եւ Ռոչեսթըրի Համալսարանում: Հնդեւրոպական լեզուաբանութեան բնագաւառում գիտութիւնների դոկտորի կոչում է ստացել Կալիֆորնիա-Լոս Անջելըսի Համալսարանում (UCLA) 1972ին: Դասաւանդել է հին յունարէն եւ լատիներէն Ուոլֆթըքի դպրոցում (Վերմոնթ Նահանգ), իսկ 1975-2010՝ եղել է Քիլկենդի Պետական Համալսարանի պրոֆեսոր:

16 գրքի եւ 500 յօդուածի ու գրախօսականի հեղինակ է: Գրեպինը մասնագիտացել է դասական գրաբարի մէջ: 1974-1975՝ Պետքարտուղարութեան դրամաշնորհով ընտանիքով մէկ տարի ապրել է Խորհրդային Հայաստանում, ուսումնասիրութիւններ կատարել Մատենադարանում: 1998ին մի կիսամեակ աշխատել է Գէօթինգէնում որպէս հրաւիրեալ պրոֆեսոր: 1980ին հիմնել է *Annual of Armenian Linguistics* հանդէսը եւ 25 տարի եղել նրա խմբագիրը: Եղել է նաեւ *Raft, A Journal of Armenian Poetry and Criticism* հանդէսի խմբագրական խորհրդի անդամ:

1974ից անդամ էր Society of Armenian Studies հայագիտական ընկերակցութեան: Հրատարակել է *Classical Armenian Nominal Suffixes: A Historical Study* (1975), *Classical and Middle Armenian Bird Names: A Linguistic, Taxonomic, and Mythological Study* (1978), *The Indigenous Languages of the Caucasus: The North East Caucasian Languages* (1994) աշխատութիւնները: Նրա խմբագրութեամբ լոյս է տեսել "Bark Galianosi": *The Greek-Armenian Dictionary to Galen* աշխատութիւնը (1985):

Լեզուաբան Ամալիա Խաչատրեանի հետ հրատարակել է *A Handbook of Armenian Dialectology* աշխատությունը (1986):

Ձոն Գրեպինը մահացել է 3 Մայիս 2016ին, Քիլվենդում (Օհայո Նահանգ), երկարատե հիանդությունից յետոյ:

ՀՀՀ

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ (1926-2016)

Բանասեր Մարտիրոս Մինասեանը ծնուել է 1926ին, Աքչայում (Ալեքսանդրէտի մօտ): Նախնական կրթութիւնն ստացել է Զմմառի Վանքում (Լիբանան): 1947ին հաստատուել է Հայաստանում, որտեղ ուսանել է Բրիստօլի Անուան Ինստիտուտում եւ ԵՊՀ Հայոց Լեզուի եւ Գրականութեան Բաժնում: 1960-1962՝ աշխատել է ՀՀ ԳԱԱ Լեզուի Ինստիտուտում, 1966-1970՝ ԵՊՀում: 1968ին Երեւանի «Լոյս» Հրատ.ը տպագրել է Մինասեանի կազմած *Histoires Amusantes: Բարձր Դասարանների Աշակերտների Համար* գիրքը:

1971-1974՝ դասաւանդել է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց դպրեվանքում եւ Հրէական Համալսարանում: Հաստատուելով Զուիցերիայում՝ Մինասեանը դարձել է 1974ին Ժընեւի «Ղուկասեանց Եղբայրներ» Հիմնադրամի եւ Ժընեւի Կանտոնի կրթութեան վարչութեան միջեւ կնքուած համաձայնագրի հիման վրայ Ժընեւի Համալսարանում հիմնուած հայագիտական կենտրոնի առաջին ղեկավարը:

Հեղինակել է հայոց լեզուի քերականութեան դասագրքեր, բազմաթիւ գրքեր, գրքոյկներ եւ գիտական յօդուածներ: Ժընեւում լոյս են տեսել Մինասեանի *Grammaire d'Arménien Oriental* (1980), *Manuel Pratique d'Arménien Occidental: Mon Premier Livre d'Arménien* (1981), *Աւելարանների եւ Գործք Առաքելոցի Յարուկ Անունների Ուղղագրութիւնը եւ Հոլովումը* (1988), *Répertoire des Verbes de l'Arménien Ancien* (1985), *Գրաբար Աւելարանների Համադրութիւն = Synopse des Evangiles en Arménien Classique* (1986), *Բայական Լրացումներ Գրաբար Աւելարաններում* (1988), *Ուսումնասիրութիւններ եւ Համաբարբառներ, Գործքի եւ Թղթերի Համաբարբառներ (Պոլսական 1895ի Տպագրի Բնագրից), Վիեննայի Միսիթարեան Թ. 608 Քառուելարանի Այլընթերցումները* (1989), *Նոր Կտակարանի Բնագիրը եւ Դասական Հայերէն* (1990), *Հայերէնագիտական Ուսումնասիրութիւններ* (1991), *Աւելարանների Գործքի եւ Թղթերի Յարադիրներ* (1993), *Analyse Grammaticale et Traduction de Marc Arménienne* (1994), *Աւելարանների Բնագիրը եւ Մակբայները* (1995), *Դասական Հայերէնի Նկարագրական Քերականութիւն (նոյնը ֆրանսերէն՝ Grammaire Descriptive de l'Arménien Classique)*, *Դասական Հայերէնի Համեմատական Քերականութիւն* (1996),

Հայերէն Աւանդական Ուղղափոխութեան Բառարան (2000), Մատթէոսի Գրաբար Աւերարանի Աշխարհաբար Թարգմանութիւններ = Traductions en Arménien Moderne de la Version Arménienne de L'Evangile Selon Matthieu, Մատթէոսի Հայերէն Աւերարանի Բայաձեւերի Եւ Այլ Բառերի Յունարէն Համապատասխանները = Les Correspondants Greco-Arméniens des Forms Verbales et de Certains Mots dans l'Evangile de Matthieu (2001), Գրաբար Աւերարանների Բառարանագրային Տարբերութիւններ, Առանձնայարկութիւններ, Բառացանկեր Եւ Բառարան: Երեք Աշխարհութեան Ժողովածու (2003), Գրաբար Աւերարանների Նախընտրելի Տպագիրը Եւ Ապառնիները, Եկեցէ Ուղղափոխին Քո, Հայերէն Սլուգաբանական Առձեռն Բառարան (2004), Մարկոսի Եւ Ղուկասի Գրաբար Աւերարանների Լեզուամեկնաբանութիւն, Գրաբար Տպագիր Աւերարանների Տարբերութիւններ Յունարէնից Եւ Իրարից, Թարգմանական Իրայարկութիւններ, Հայերէն Աւերարանների Նոյնանմաններ Բնագրի Թարգմանութեամբ, Գրաբար Աւերարաններն Իրենց Արեւելահայերէն Հաւաքարիմ Թարգմանութեամբ, Գրաբար Աւերարանների Բառագանձը, Օգնութիւն Ուղղափոխական Վերականգնմանը, Գրաբար Աւերարանների Բնագրավերլուծական Համարաբառ (2005), Գրաբար Աւերարանների Շարահիւսական Տեղեկատու, Աստուածաշնչի Արեւելահայերէն Էջմիածնական Թարգմանութեան Որակը (2006), Ծնունդի Մի Տարբերակ (2007) Եւ այլ աշխատութիւններ: Հրատարակել է Եզնիկ Կողբացու Ճառք Ընդդէմ Աղանդոց աշխատութիւնը (1992): Անթիլիասում լոյս է տեսել Մինասեանի Գրաբարի Գործնական Դասընթաց (1976), Նամակներ Վիեննայի Միսիթարեաններին (Ա. Հտր., 1992), Նիւ Եորքում՝ Grammaire d'Arménien Oriental (1980), Վենետիկում՝ Emplois des Prépositions en Arménien Classique (1981), Variantes des Evangiles Arméniens dans les Bibles de 1805, 1860, 1895 (1986), Վիեննայում՝ Աւերարանների Լիակատար Համարաբառներ (1991), Երեւանում՝ Գրաբար Աւերարանների Համարաբառ (1993), Լիսաբոնում՝ Cours Intensif d'Arménien Ancien: Avec Reprise et Trad. des Versions du "Manuel Pratique d'Arménien Ancien" (2002):

Մինասեանը զբաղուել է մասնաւորապէս ժԹ. դարում Շուէդիայում բնակուած բանասէր Նորայր Բիւզանդացու անտիպ ժառանգութեան հրատարակութեամբ, ժընելում տպագրել է Բիւզանդացու՝ Տեսութիւն Քննական Քերականութեան. Հ. Արսէնի Այլընեան (1989), Նոր Բառագիրք Հայկազեան Լեզուի = Nouveau Dictionnaire D'arménien Ancien (1990, 5 հատոր), Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց (Ժողովածու). Խորենացին Ըստ Նորայրի (1991), Բառագիրք Սյորին Հայերէնի Ի Մատենագրութեանց ԺԱ-ԺԷ Դարուց (2000), Հայ Պարտէզ (2002), Մեկնութիւն Բառից Գաղիանոսի: Համեմատութեամբ Հնգից Ձեռագրաց (2001), Հայրընտրի Տաղարան Հայ Բանաստեղծից Ի Դարսն ԺԲ-ԺԸ,

Յաւելուած Հարընտիր Տաղարանիս (2002) Ուսումնասիրութիւններ (2003) հատորները:

Թարգմանել է ժընետում հրատարակել է Անտուան Մէյէի *Դասական Հայերէնի Համեմատական Քերականութեան Ուրուագիծ* (1988) եւ *Նամակներ Թիֆլիսից եւ Հայաստանից 1891թ. Ապրիլի 29-ից Օգոստոսի 3* (2002), ժան Ռիշպէնի *Դոն Կիխոթ. Հերոսա-Չաւելտական Թարերախաղ Երեք Մասով եւ Ութ Պարկերով* (1996) գործերը:

Մարտիրոս Մինասեանը մահացաւ 2 Յուլիս 2016ին, ժընետում:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ

artsvi@yahoo.com



ԱՆԺԷԼ ՔԻՒՐՔՃԵԱՆ
(1927-2016)

Լեզուաբան, Խ. Աբովեանի Անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի երկարամեայ դասախօս Անժէլ Ներսէսի Քիւրքճեանը ծնունել է 1927ին, Հալէպում: 1946ին, Քիւրքճեանների ընտանիքը Հալէպից ներգաղթում է հայրենիք:

1947-1951՝ սովորել է Երեւանի Մանկավարժական Ինստիտուտի (ՄԻ) Լեզուագրական Ֆակուլտէտում, 1951ին ընդունուել է նոյն ինստիտուտի ասպիրանտուրան՝ «ժամանակակից հայոց լեզու» մասնագիտութեամբ: 1956ին պաշտպանելով «Հայերէնի Մակբայները» ատենախօսութիւնը՝ ստացել է բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճան, դառնալով գիտական աստիճանի արժանացած առաջին հայրենադարձ հայուհին: Հեղինակը մակբայներն ուսումնասիրել է պատմական կտրուածքով (գրաբար, միջին հայերէն, գրական հայերէն՝ իր երկու ճիւղերով, բարբառներ) եւ ճշգրտելով մակբայի՝ որպէս խօսքի մասի առանձնայատկութիւններն ու սահմանները՝ իր ներդրումն է կատարել՝ աշխարհաբարի քերականութեան պատմութեան մէջ մակբայներից առաջինը առանձնացնելով եղանակաւորող բառերը՝ որպէս առանձին՝ ինքնուրոյն 10րդ խօսքի մաս, իսկ հայ քերականագիտութեան մէջ՝ մակբայի մի նոր տեսակ՝ ընդհանրական մակբայները:

1956-1995՝ աշխատել է Խ. Աբովեանի Անուան Հայկական Մանկավարժական Ինստիտուտի Լեզուագրական եւ Հայոց Լեզուի Ու Տարրական Ուսուցման Մեթոդիկայի ամբիոններում նախ՝ որպէս աւագ դասախօս, ապա՝ դոցենտ: Մարդկային իր անզուգական կերպարով, նա միշտ օրինակ է եղել ուսանողներին ու շրջապատին: Նրա անունը սերտօրէն կապուած պիտի մնայ սփիւռքահայ վարժարաններուն,

մանաւանդ՝ նրա պատրաստած, մշակած եւ վերամշակած դասագրքերով, որոնք պատրաստուած էին յատկապէս սփիւռքահայ աշակերտութեան համար: Հայ մանուկները դեռ երկար կը սովորեն նրա հեղինակած *Այբբէնարանով* (2001-2006՝ ունեցել է բազմակի հրատարակութիւններ):

Քիւրքճեանի հեղինակակցութեամբ Սփիւռքի հայկական դպրոցների համար կազմուել է տարրական դասարանների դասագրքերի շարք. *Մայրենի Լեզու. Ընթերցարան, Գ. Տարի* (1981, 1984), *Հայրենի Աղբիւր* (1989, 1996), *Հայրենի Աղբիւր Բ. Տարի* (1990) դասագրքերը գործադրուել են ԱՄՆի, Կանադայի, Սիրիայի եւ սփիւռքեան այլ դպրոցներում: Քիւրքճեանը հեղինակակից է Հայաստանի հանրակրթական դպրոցների տարրական դասարանների դասագրքերից *Այբբէնարանի* (որի արեւմտահայ տարբերակը գործադրուել է Լոս Անջելըսի ՀԲԸՄ Մարի Մանուկեան-Տեմիրճեան վարժարանում), *Մայրենի 1, Մայրենի 2* դասագրքերի՝ յարակից աշխատանքային տետրերով, *Պարկերազարդ Այբուբէնով, Սովորում ենք Խաղալով* պատատոների հաւաքածուով, ինքնուրոյն ընթերցանութեան համար նախատեսուած *Հեքիաթների Քո Աշխարհը* ժողովածուով, *Իմ Օգնականը* (1, 2) գիրք-տետրերով եւ ուսումնասօժանդակ ու մեթոդական այլ ձեռնարկներով: *Աղբիւր* դասագիրք-տետրը հասցէագրուած է նախադպրոցական երեխաներին: Քիւրքճեանի հեղինակակցութեամբ ստեղծուել են *Ճանաչի՛ր Երկիրը Քո մատենաշարի* երեք գրքերը:

Նրա գիտական ուսումնասիրութիւնները վերաբերում են արեւելահայերէնի լեզուական իրողութիւնների դիտարկումներին, կամ յենում են արեւմտահայերէնի լեզուական տուեալների վրայ: Իսկ որոշները լեզուական նոյն իրողութեան զուգադրական-համեմատական քննութիւն են գրաբարում եւ գրական հայերէնի երկու ճիւղերում: Քիւրքճեանը հրատարակել է նաեւ *Անուանական Բաղադրեալ Ստորոգեալը Եւ Նրա Խնդիր Ու Պարագայ Լրացումները* (1975), *Այբբէնարանի Մեթոդական Ուղեցոյց* (2001), «Շողիկ» *Այբբէնարանի Մեթոդական Ուղեցոյց* (համահեղինակ՝ Լ. Ա. Տէր-Գրիգորեան, 2006): *Ծաղկաքաղ Հայկական Յուշարձանների. Պարմական Եւ Ժամանակակից Յուշարձաններ* (կազմող, Լիլիթ Տէր-Գրիգորեանի հետ) հատորները: Նրա վերջին աշխատութիւնն էր *Հայերէնի Մակբայները* (2011) ծաւալուն մենագրութիւնը:

2012ին հրատարակել է *Կեանքիս Յիշարժան Էջերից* յուշագրութիւնը՝ որպէս այդ ժամանակաշրջանի մտածող երիտասարդութեան եւ նրանց դաստիարակող ու ղեկավարող աւագ սերնդի յիշարժան վաւերական վկայութիւն: Յետմահու, *Կանթեղ* հանդէսում (2016, թիւ 3) լոյս տեսաւ Քիւրքճեանի «Դարձեալ Արեւմտահայերէնի Այբուբէնի Համակարգում Ու Ձայնաւորը Տարի Կարգավիճակի Արժանացնելու Մասին» յօդուածը:

Նա անցաւ կեանքի ի՛ր ճանապարհը՝ սեփական, անկրկնելի եւ միաներից միանգամայն տարբեր հետք թողնելով այդ ճանապարհին: Ապրեց ազնիւ, համեստ՝ մինչեւ կեանքի վերջին օրը ծառայելով իր ժողովրդին եւ իր գործին:

Անժէլ Քիրքճեանը մահացաւ 20 Յուլիս 2016ին, Երեւանում:

◀◀◀

ԱՆՆԱ ԲԱՐՍԱՄԵԱՆ (1915-2016)

Երաժշտագէտ, պրոֆեսոր (2003), ՀԽՍՀ արուեստի վաստակաւոր գործիչ (1983) Աննա Ալեքսանդրի Բարսամեանը ծնուել է 28 Յունիս 1915ին, Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գիւմրի):

1936-1941՝ սովորել է Երեւանի Կոմիտասի Անուան Պետական Կոնսերվատորիայի Դաշնամուրային Բաժնում, 1938ին՝ նորաստեղծ Երաժշտական Պատմատեսական բաժնում: 1945-1949՝ ուսումը շարունակել է Մոսկուայի Կոնսերվատորիայի ասպիրանտուրայում՝ Ռոման Գրուբէրի դասարանում, որի ղեկավարութեամբ պաշտպանել է «Ալեքսանդր Սպենդիարեանը եւ Նրա Ստեղծագործութիւնը» թեզը: 1938-1942՝ դասաւանդել է Երեւանի Երաժշտական Ուսումնարանում եւ Պիոտր Չայկովսկու Անուան Միջնակարգ Մասնագիտական Երաժշտական Դպրոցում, 1942-1945՝ Լենինականի Երաժշտական Ուսումնարանում, 1950ից՝ Երեւանի Կոնսերվատորիայում: Աննա Բարսամեանի ղեկավարութեամբ աւարտել է 51 երաժշտագէտ: 1956ից Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան անդամ է: 1974-1977՝ Զինուորական Բարձրագոյն Կուսակցական Դպրոցում դասաւանդել է երաժշտութեան պատմութիւն: 1977-1992՝ Երեւանի Պետական Կոնսերվատորիայում բարձրագոյն երաժշտական հաստատութիւնների դասատուների որակաւորման բարձրացման բաժնում հանդէս է եկել որպէս դասախօս եւ երաժշտագէտ, ունկնդիրների գիտա-մեթոդական աշխատանքների ղեկավար:

Հեղինակել է գիտական աշխատութիւններ, որոնք տպագրուել են պարբերական մամուլում, ամսագրերում, *Հայկական Հանրագիտարանում*, ռուսական «Յիշարժան տարեթուների եւ իրադարձութիւնների տարեգրքեր»ում, նաեւ՝ 30ից ատելի ռադիօհաղորդումներ: 1960ից Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան եւ «Գիտելիք» Ընկերութեան շրջանակներում կարդացել է շուրջ 600 դասախօսութիւն Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս (Կիւեւ, Լվով, Դոնի Ռոստով, Մոսկուա, Լենինգրադ):

Առանձին գրքերով լոյս են տեսել Բարսամեանի Ա. Ա. Սպենդիարեանի «Ալմաստը» (1958, ռուսերէն), *Հայ Երաժշտութեան Պատմութիւն*

(դասագիրք, 1968), *Նոր Դպրոց*, (1996, համահեղինակ՝ Մարգարիտ Յարութինեան), *Սովետահայ Երաժշտությունը* (1981, համահեղինակ՝ Մարգարիտ Յարութինեան), *Հայ Երաժշտության Դասականները* (1986), *Մեղէա Աբրահամեան* (2000) աշխատությունները:

Աննա Բարսամեանը մինչեւ 100 տարեկան դառնալը շարունակել է գնալ կոնսերվատորիա, մասնակցել երաժշտագիտական յօդուածների խմբագրմանը: Նա մահացաւ 11 Օգոստոս 2016ին, Երեւանում:

<<<

ԼԵՒՈՆ ԵՂԵԿԵԱՆ (1941-2016)

Լեզուաբան, բանասիրական գիտությունների դոկտոր, Լեւոն Կորիւնի Եզեկեանը ծնուել է 1941ի Յունիսի 13ին, Լվովում (Ուկրաինա): 1965ին աւարտել է ԵՊՀ Բանասիրութեան Ֆակուլտէտը, 1968ին՝ ԵՊՀ ասպիրանտուրան: 1965ից դասաւանդել է ԵՊՀ Հայոց Լեզուի Ամբիոնում: 1971ին պաշտպանել է թեկնածուական՝ «Րաֆֆու Ստեղծագործությունների Լեզուն Եւ Ոճը» թեմայով: 1990ին պաշտպանել է դոկտորական՝ «Գրական Աշխարհաբարը Եւ Խաչատուր Աբովեանի «Վէրք Հայաստանի» Վէպի Լեզուն» թեմայով: 1991-2013՝ եղել է ԵՊՀ Հայոց Լեզուի Ամբիոնի վարիչը, 2013ից՝ ԵՊՀ Հայոց Լեզուի Ամբիոնի պատուաւոր վարիչ: Եղել է ՀՀ ԳԱԱ Լեզուի Ինստիտուտին կից գործող 019 Մասնագիտական Խորհրդի անդամ, ԵՊՀ հայ բանասիրութեան, ռոմանագերմանական բանասիրութեան բաժանմունքների գիտխորհուրդների անդամ, «Լեզուաբանութեան» Խորհրդի անդամ: Արժանացել է Համբուրգի եւ ՀՀ Կրթութեան Եւ Գիտութեան Նախարարութեան պատուոգրերի:

Երեւանում առանձին հատորներով լոյս են տեսել Եզեկեանի *Րաֆֆու Ստեղծագործությունների Լեզուն Եւ Ոճը* (1975), *Հրանտ Մաթեոսեանի Խօսքարուեստի Մի Քանի Հարցեր* (1986), *Գրական Աշխարհաբարը Եւ Արեւելահայ Պատմավէպի Լեզուն* (1990), *Հայերէնի Գործառական Ոճերը* (1999), *Հայոց Լեզուի Ոճագիտություն* (2003), *Հայոց Լեզու* (2005), *Լեզու-Նորմա-Համակարգ* (2007), *Խօսքի Աշակոյթի Եւ Ոճաբանութեան Ուղեցոյց* (2007), *Ոճագիտութեան Ուղեցոյց* (2007), *Հայոց Լեզուի Ոճագիտություն* (2007), *Հայերէնի Ուղղագրական Նոր Բառարան* (2011), *Խօսքի Ճշգրտություն Եւ Ճզգրտություն* (2013) աշխատությունները: Համահեղինակ է հայոց լեզուի դպրոցական դասագրքերի եւ հայոց լեզուի հարցաշարերի շտեմարանների:

Ռուսաստանի Հումանիտար Գիտությունների Ակադեմիայի անդամ (1997), ՀՀ գիտութեան վաստակաւոր գործիչ (2011) Լեւոն Եզեկեանը մահացաւ 14 Օգոստոս 2016ին, Երեւանում:

<<<

ՀՐԱՉԵԱՅ ԹԱՄՐԱՉԵԱՆ
(1953-2016)

Գրականագետ, միջնադարագետ Հրաչեայ Թամրազեանը ծնունդ է 1953 Դեկտեմբերի 5ին, Երեւանում, գրականագետ Հրանտ Թամրազեանի ընտանիքում: 1976ին աւարտել է ԵՊՀ Բանասիրական Ֆակուլտետը: 1977-1988՝ աշխատել է Երեւանի Մեսրոպ Մաշտոցի Անուան Մատենադարանում, 1988-1991՝ «Սովետական Գրող» Հրատ.ում՝ որպէս գլխավոր խմբագիր, 1991-93՝ «Նայիրի» Հրատ.ի տնօրէն, 1993-1995՝ ՀՀ կառավարութեանն առընթեր Հրատարակչական Գործերի Վարչութեան պետ, 1995-1997՝ ՀՀ Տեղեկատուութեան Նախարար, 1997-2007՝ «Նայիրի» Հրատ.ի տնօրէն եւ համատեղութեամբ Մատենադարանի աագ գիտաշխատող, 2007ից մինչեւ մահը՝ տնօրէն: Իր օրով Մատենադարանի անձնակազմը երիտասարդացաւ, թափ առաւ նիւթերի թուայնացման աշխատանքը:

1985ից Հայաստանի Գրողների Միութեան անդամ է: 1999ին ստացել է բանասիրական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճան: 2014ին դարձել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ:

Նա ոչ միայն գրականագետ-միջնադարագետ էր, այլեւ բանաստեղծ, թարգմանիչ: Կազմել եւ խմբագրել է *XX Դարասկզբի Ռուսական Պոեզիա* ժողովածուն:

Թամրազեանը հեղինակ է միջնադարագիտական մի շարք ուսումնասիրութիւնների, որոնք հիմնականում առնչւում են նարեկացիագիտութեանը: 1986ին տպագրուել է նրա *Անանիա Նարեկացի. Կեանքն Ու Մայրենագրութիւնը* ուսումնասիրութիւնը, 1999ին՝ *Նարեկեան Դպրոցը*, 2004ին՝ *Գրիգոր Նարեկացին Եւ Նորայլաբանականութիւնը* (ռուսերէն՝ 2011ին), 2005ին՝ *Սուրբ Գրիգոր Նարեկացու Կեանքը* (ֆրանսերէն՝ 2007), 2007ին՝ *Գրիգոր Նարեկացին Եւ Կիլիկիայի Բանաստեղծական Արուեստի Դպրոցը*, 2009ին՝ *Ճառ Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ Ասացեալ*: 2011ին նրա աշխատասիրութեամբ տպագրուել է *Մայրենագիրք Հայոց* ժողովածուի Ժ. հատորը, որտեղ ընդգրկուած մատենագիրների գիտաքննական բնագրերը պատրաստել է ինք: Այնտեղ ներկայացուել են հայագետի «Ժ. Դարի Մատենագրութիւնը» առաջաբանը, «Անանիա Նարեկացի» առաջաբանը, նաեւ՝ «Գրիգոր Նարեկացուն Վերագրողը Երկերի Հեղինակային Պատկանելութեան Հարցը Նոր Փաստերի Լոյսի Ներքոյ», «Ճառ Սրբոյն Գրիգորի Նարեկացոյ Ասացեալ» ուսումնասիրութիւնները, որտեղ նարեկացիագետը ձեռագրական փաստերով հիմնաւորում է Ճառին՝ Գրիգոր Նարեկացուն պատկանելը: Նոյն թուականին կրկին իր

աշխատասիրութեամբ լոյս է տեսել նաեւ *Մայրենագիրք Հայոց* ժողովածոյի ԺԲ. հատորը, որը ներառում է Գրիգոր Նարեկացու *Մայրենան Ողբերգութեանը*, Գանձտետրը, մեկնութիւնները, ներբողները, խրատները, թղթերը: Սոյն հատորը ներառում է նաեւ Թամրազեանի «Սուրբ Գրիգոր Նարեկացու Կեանքը» առաջաբան-ուսումնասիրութիւնը:

Հրաշեայ Թամրազեանը մահացաւ 3 Սեպտեմբեր 2016ին:

ՎԱՆՕ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ
vano.exiazaryan@mail.ru

ՅԱԿՈՐ ՕՐՄԱՆՃԵԱՆ (1935-2016)

Բուլղարահայ թարգմանիչ, պատմաբան Յակոբ Օրմանճեանը ծնուել է 1935 Սեպտեմբերի 6ին, Վառնայում: Նա Սոֆիայի Համալսարանի Հայկական Եւ Կովկասեան Հետազոտութիւնների Կենտրոնի դասախօս էր 1997ից եւ հայկական գեղարուեստական գրականութեան բեղուն թարգմանիչ՝ բուլղարերէնի: Թարգմանել է աւելի քան 30 գիրք (վէպեր եւ պատմաձօնների ժողովածուներ) եւ հեղինակային միքանի գիտական գրքեր: Բուլղարիայի պատմագիտութիւնը Օրմանճեանին պարտական է *Հայկական Ողբերգութիւնները Բալկանների Մասին. XVII-XIX Դարեր* ժողովածոյի կազմման եւ թարգմանութեան համար (1985): Հեղինակ է նաեւ *Հայերէն-Բուլղարերէն Բառարան Սկսնակների Համար* (Մաս 1-2, 1985), *Հայկական Անուանացանկ* (2000) եւ *Առեղծուածային Արեւելքը (Յօդուածների ժողովածու)* (2002) հատորների:

Օրմանճեանի շնորհիւ բուլղարերէնով Սոֆիայում, Վառնայում եւ Պլովդիում լոյս են տեսել Հրանտ Մաթեոսեանի *Նարինջ Զամբիկը* (1975), *Ծառերը* (1978) եւ *Որքան Լաւն է Աշխարհը, Աստուած Իմ* (2010), *Հայկական Պատմաձօններ* (1975), Զօրայր Խալափեանի *Որտե՞ղ էիր, Մարդ Աստուծոյ* (1976), Վարդգէս Պետրոսեանի *Դեղատուն «Անի»* (1976) եւ *Ապրած եւ Չապրած Տարիներ* (1985), Սերօ Խանգաղեանի *Քաջարան* (1977), *Երեք Տարի եւ 291 Օր* (1986) եւ *Ծարաւ եմ, Ջուր Տուէք* (1987), Վահան Թոթովենցի *Կեանքը Հին Հռոմէական Ճանապարհի Վրայ* (1978), Մուշեղ Գալշոյեանի *Բովկուն* (1978), Մկրտիչ Սարգսեանի *Ճակատագրից Դատապարտուածներ* (1979), Շիրվանզադէի *Քառս* (1979), Գէորգ Արշակեանի *Դաղձի Բոյրը* (1980), Աղասի Այվազեանի *Սինիոր Մարտիրոսի Արկածները* (1981), Գուրգէն Մահարու *Երկրասարդութեան Սեմին: Եռասպարում* (1981), Բաֆֆու *Սամուէլ* (1982, 2010), Վահագն Գրիգորեանի *Փակ Սենեակ* (1985), Ղազարոս Աղայեանի, Յովհաննէս Թումանեանի եւ Աւետիք Իսահակեանի *Քաջ Նազար* (1986), Կարէն Սիմոնեանի *Երկուորեակների Մոլորակը* (1987), Հայկ Խաչատրեանի *Հացապարում* (1996) եւ *Հայոց Թագաւորները* (2014), *Հայ Ժողովրդի*

Պատմություն (Սկրոտիչ Ներսիսեանի խմբագրութեամբ, 1998), Ազաթանգեղոսի Հայոց Պատմություն (2001), Խաչիկ Դաշտենցի Ռանչպարների Կանչը (2003), Մարտիրոս Սարեանի Արեւը Մեր Բոլորինն է (2004), Նար-Դոսի Աննա Սարոյեան (2005), Էդուարդ Սարգսեանի Անդունդների Կանչը (2008), Վարդան Բալեանի Զանգեզուրի Առեղծուածը (2012) հատորները: Բուլղարերէնից հայերէն է թարգմանել եւ ծանօթագրել Կրայի Մարկո բուլղարական դիւցազնավէպը (2010):

Յակոբ Օրմանճեանը մահացաւ 8 Սեպտեմբեր 2016ին:

ԱՆՏՈՒԱՆԵՏԱ ԱՆԳԵԼՈՎԱ

anguean@gmail.com

ԳԱԲՐԻԷԼԱ ՈՒԼՈՒՀՈՃԵԱՆ (1934-2016)

Իտալական բանասիրական դպրոցի ներկայացուցիչ, ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ Գաբրիէլա Ուլուհոճեանը ծնուել է 22 Յուլիս 1934ին, Իտալիայի Մանտովայի Մարզի Բոցցոլո բնակավայրում՝ 1915ի Ցեղասպանութիւնից յետոյ, Խարբերդից եւ Կ.Պոլսից գաղթած ծնողների ընտանիքում: 1953ին ընդունուում է Միլանի Կաթոլիկ Համալսարանի Բանասիրութեան եւ Փիլիսոփայութեան Բաժանմունքի Դասական Բանասիրութեան Բաժինը: Համալսարանում, հայագէտ Ջանկարլո Բոլոնիեզիի ղեկավարութեամբ մասնագիտանում է համեմատական լեզուաբանութեան բնագաւառում:

Համալսարանն ասարտելուց յետոյ, բիւզանդագէտ Անտոնիո Պերտուզիի ղեկավարութեամբ ձեռնամուխ է լինում բիւզանդական մատենագիր Գէորգ Պիսիդասցու Վեցօրէից արարչագործութեանը նուիրուած երկի հայերէն եւ հին սլաւոներէն միջնադարեան թարգմանութիւնների հետազոտութեանը: Աշխատանքը գրելու ընթացքում նա համագործակցում է լեզուաբան եւ սլաւոնագէտ Ջուզեպէ Ֆերմելիային, որն էլ գլուխ է բերում Վեցօրէիցի սլաւոներէն եւ հայերէն թարգմանութիւնների պատմաբանասիրական քննութեան հրատարակութիւնը, օգտագործելով Ուլուհոճեանի հետազոտութեան արդիւնքները: Այսպիսով, Ուլուհոճեանի գիտական հետազոտութիւնների առաջին շրջանը սերտօրէն կապուած է յունաբան դպրոցի հայերէն թարգմանութիւնների ուսումնասիրութիւնների հետ, որոնց ընթացքում նա ձեւաւորուել է իբրեւ հայագէտ-հետազոտող: Հայագիտութեան ոսկէ ֆոնդում են նրա հետազոտութիւնները՝ Թէոփի Ճարպասանութիւնների հայերէն թարգմանութիւնների բնագրերի մասին: 1979-1980՝ ուսումնասիրել է կատարել Մատենադարանում պահպանուող Բարսեղ Կեսարացու Գիրք Հարցմանցի հայերէն թարգմանութեան ձեռագրերը: Հայագիտութիւնը նրան է պարտական Գիրք Հարցմանցի գիտական

հրատարակութեան եւ իտալերէն ծանօթագրուած թարգմանութեան համար (*Basilio di Cesarea. Il Libro delle Domande (Le Regole)*, Corpus Scriptorum Christianorum Orientalium, 536-537; *Scriptores Armeniaci*, 19-20, 1993): Նա իր նպաստն է բերել նաեւ Կեղծ Կալիսթենէսի *Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացոյ* երկի թափառական բնագրի հայերէն միջնադարեան թարգմանութեան հետազոտութեան ասպարէզում:

Ուլուհոճեանի հետազոտութիւնների յաջորդ կարելորագոյն բնագաւառը վիմագրագիտութիւնն էր: Բնագաւառում նախնական հետազոտութիւնը սկսելով, ձեռքի տակ ունենալով Յովսէփ Օրբելու կազմած *Դիւան Հայ Վիմագրութեան* Ա. հատորը, ուր ներկայացուած են Անիի վիմագրութեան յուշարձանները, Ուլուհոճեանը թարգմանեց եւ հետազոտեց Անիի վիմագիր արձանագրութիւնները, լուսաբանեց եւ համաշխարհային գիտական հանրութեանը ներկայացրեց Բագրատունիների մայրաքաղաքի պատմութեան բազմաթիւ դրուագներ: 1980ականներին կատարուած այս հետազոտութիւնները նպատակ ունէին համաշխարհային հանրութեանը ցոյց տալ Անիի պատմամշակութային յուշարձանների կարելորութիւնը համաշխարհային մշակոյթի համար եւ հասնել նրան, որ Անի քաղաքը ԵՌԻՆԵՍԿՕՆ վերցնէր իր հսկողութեան տակ:

Նոյն բնագաւառում նրա յաջորդ քայլը եղաւ իրանում գտնուող, Ջուլայի Սուրբ Ստեփանոս Վանքի եւ Դարաշամբի վիմագիր արձանագրութիւնների հետազոտութիւնը, որոնք նա վերծանեց, ենթարկեց լեզուաբանական քննութեան, թարգմանեց իտալերէն եւ օժտեց ծանօթագրութիւններով (*Silloge delle epigrafi armene di S. Stefano di Giulfa*, (Ricerca sull'Architettura Armena, 22), 1981): Նրա վիմագրագիտական հետազոտութիւնները տարածուեցին նաեւ Իտալիայի վրայ, իյայտ բերելով Ջենովայում պահպանուած չափազանց հետաքրքիր հայերէն արձանագրութիւններ:

Ուլուհոճեանի հետաքրքրութիւնների միւս բնագաւառը հայերի ներկայութիւնն էր Իտալիայում: Նա հետաքրքիր նիւթեր հրատարակեց 'սարդինացի'-բոլոնիացի, հայոց գործերի մէջ թաթախուած Դէոդատո Փափագեանի, Ծիրանաւոր Ջուզեպէ Գասպարո Մեցոֆանտիի եւ Լուիջի Ֆերդինանդո Մարսիլիի եւ 1805ին Բոլոնիայում ուսանած Պետրոս (Պիետրո) Կարալով Թիֆլիսեցու մասին պատմող արխիւային վաւերագրերից: Նա նոյն բնոյթի վաւերագրեր հրատարակեց նաեւ գրականագէտ եւ քաղաքագէտ Անտոնիո Բաստոյի եւ բանաստեղծ Հրանտ Նազարեանցի բարեկամութեան պատմութիւնից, որոնք վերաբերում են Հայոց Եղեռնի դժնի տարիներին: Եղեռնի թեման կարմիր թելի նման անցնում էր նրա աշխատանքների միջով:

Ուլուհոճեանի գիտամանկավարժական գործունէութեան պսակներից է իր երկու ուսանողների՝ Մարկո Բայսի եւ Լորիս Դինա Լոչետիի հետ

Փաստոս Բուզանդի *Հայոց Պատմութիւնի* իտալերէն թարգմանութիւնը (*P'awstos Buzand. Storia degli Armeni*, traduzione di M. BAIS e L.D. NOCETTI, note di M. BAIS, 1997):

Ուլուիոնեանն իր պարտականութիւններից էր համարում իտալական արխիւներում եւ գրադարաններում հայկական նիւթերի դասդասումը, նկարագրութիւնն ու հրապարակումը: Նա երկար տարիներ պրպտումներ է կատարել Վենետիկի Ս. Ղազար Վանքի եւ Վատիկանի Առաքելական գրադարաններում: Նրա աշխատասիրութեանն ենք պարտական իտալական շուրջ քսան քաղաքային գրադարաններում պահպանուող հայկական ձեռագրերի բաւական ընդարձակ նկարագրութիւնների համար: Մասնագիտական բժախնդրութեամբ կիրարկելով ձեռագրերի նկարագրութեան տաշեանական սկզբունքները, նա կարողացել է մասնագէտներին հասցնել իր տեսած ձեռագրերի բովանդակութիւնը, վերահաստատելով այն տեսակէտը, որ Իտալիայում պահուում են հայոց մշակոյթի բազմաթիւ գլուխգործոցներ: Այդ ձեռագրերի քարտարանը լոյս տեսաւ 2010ին (*Catalogo dei Manoscritti Armeni delle Biblioteche d'Italia*, (“Indici e Cataloghi, Nuova Serie XX”), Istituto Poligrafico e Zecca dello Stato, Libreria dello Stato, 2010): Այդ պրպտումների արդիւնքում էր, որ իյայտ եկաւ Երեմիա Չելեպի Քէօմուրճեանի քարտէզը: Այդ յայտնագործութիւնը եւ Ուլուիոնեանի խնամաշատ հրատարակութիւնը (*Un'antica Mappa dell'Armenia. Monasteri e Santuari dal I al XVII secolo*, 2000) մեծ դեր կատարեցին հիմնովին փոխելու պատկերացումները հայկական քարտէզագրութեան պատմութեան վերաբերեալ: 2003ին Աննա Շիրինեանի համագործակցութեամբ հրատարակեց հայ գրիչներին եւ մանրանկարիչներին նուիրուած աշխատութիւնը (*Forme di Comunicazione nel Medioevo. Copisti e Miniatori Armeni*, 2003), իսկ 2009ին՝ *Հայերը աշխատութիւնը* (*Gli Armeni*, 2009, 2013, 2015):

Նրա խմբագրութեամբ նաեւ լոյս տեսան հինգ հատոր (իտալերէն, անգլերէն), 90 իտալերէն եւ հայերէն յօդուած գիտական մամուլում, մօտ 30 թարգմանութիւններ, հանրագիտարանային յօդուածներ, գրախօսութիւններ, հրապարակումներ:

2004ին լոյս տեսաւ Ուլուիոնեանին նուիրուած եւ նրա գիտական վաստակը արժեւորող յօդուածների ժողովածու՝ *Bnagirk' Yišatakac': Documenta memorial Dall' Italia e dall' Armenia*, Studi in onore di Gabriella Uluhogian, a cura di Valentina Calzolari, Anna Sirinian, Boghos Levon Zekiyian, Bologna, Dipartimento di Paleografia e Medievistica Alma Mater Studiorum, Universita di Bologna:

1973ին, լեզուաբան Լուիճի Հէյլմանի փափաքով՝ Պոլոնիայի Համալսարանում ստեղծուած հայկական ուսմանց ամբիոնում դասաւանդել սկսելուց միառժամանակ անց, 1982ից ղեկավարել է այն: Հայաստանի եւ Իտալիայի գիտական հասարակութիւնների միջեւ իր

խաղացած դերով նա նոր որակի բարձրացրեց այդ երկրների միմեանցով հետաքրքրուող գիտական հիմնարկների փոխյարաբերությունները:

Անդամակցել է Հայ Ճարտարապետության Վաւերագրեր շարքի խմբագրութեան, միջազգային եւ իտալական բազմաթիւ ընկերակցութիւններու, Հայկական Հետազոտութիւններու Միջազգային Ընկերակցութեան, մասնակցել Պօ-Արաքս Ընկերութեան հիմնադրման: 1991ից անդամ էր *Revue des Etudes Armeniennes*ի Գիտական խորհրդին:

Գաբրիէլա Ուլուհոճեանը մահացաւ 28 Նոյեմբեր 2016ին, Պարմայում:

ԱՐԱՏ ԲՈՂՈՅԵԱՆ

bznazt@ymail.com

ԲԱՐՍԵՂ ԹՈՒՂԼԱՃԵԱՆ

(1933-2016)

Բանասէր, բառարանագիր Բարսեղ Միքայէլի Թուղլաճեանը (թուրքերէն՝ Pars Tuğlaci) ծնուել է 1 Ապրիլ 1933ին, Ստամբուլում: Բարձրագոյն ուսումը ստացել է ԱՄՆում՝ 1955ին աւարտելով Միչիգանի Համալսարանի լեզուաբանական բաժինը: Նոյն թուականից աշխատանքի է անցել Անկարայի Զինուորական Ակադեմիայում որպէս անգլերէնի եւ ֆրանսերէնի դասախօս:

Կատարել է թարգմանութիւններ ֆրանսերէնից հայերէն, ինչպէս՝ Պրոսպէր Մերիմէի *Կարմէր*, Գի Դը Մոպասանի պատմուածքները: Ստամբուլի հայ մամուլում (*ժամանակ*, *Նոր Լուր*, *Արշաւ* եւն.) տպագրել է վիպակներ եւ պատմուածքներ:

Թուղլաճեանի պատմաբանասիրական հետաքրքրութիւնների մէջ կարեւոր տեղ է գրաւում *Օսմանեան Ճարտարապետութեան Արեւմտականացման Ժամանակաշրջանն Ու Պալեան Ընդանիքը* (1982) ծաւալուն աշխատութիւնը, որտեղ նա վեր է հանել ճարտարապետերի մեծ ու հռչակուած Պալեան գերդաստանի միջանի սերնդի պատմութիւնը Օսմանեան Կայսրութեան ճարտարապետական արուեստի զարգացման պատմութեան մէջ: Նրա աշխատութիւնների մէջ հայկական իրականութեանը վերաբերող գործերից մէկն էլ *Ayvazovski Türkiye’de* գիրքն է (1983): Թուղլաճեանի՝ հայկական թեմաներով գործերից են նաեւ *Պոլսի Իշխանաց Կղզիները Պատմութեան Ընթացքում* (1989) եւ *Իսթանպուլի Հայոց Եկեղեցիները* (1991) գրքերը՝ հայերէն, թուրքերէն եւ անգլերէն:

1970-1980ականներին Թուղլաճեանն իր բանասիրական հետաքրքրութիւնների համար քանիցս այցելել է Երեւան: Կապուած է եղել Գիտութիւնների Ակադեմիայի հետ:

Իր գրչին կը պատկանին *Osmanli Şehirleri* (1985), *İngilizce-Türkçe Ekonomi ve Hukuk Terimleri Sözlüğü* (համահեղինակութեամբ Remzi Kitabevih, 2002), *Türkçe-İngilizce Bilimsel ve Teknik Terimler Sözlüğü* (2001),

Tip Sözlüğü (1964), *Ermeni Edebiyatından Seçkiler, Türkçede Anlamdaş ve Karşit Kelimeler Sözlüğü* (1996), *Tarih Boyunca İstanbul Adalari* (Cilt I' 1995, Cilt II' 1992), *Osmanlı Mimarlığı'nda Balyan Ailesi'nin rolü* (1993), *Dadyan Ailesi'nin Osmanlı Toplum, Ekonomi ve Siyaset Hayatındaki Rolü* (1993), *Çağdaş Türkiye* (2 Cilt, 1987), *Mehterhane'den Bando'ya - Turkish Bands of Past and Present* (1986), *Osmanlı Saray Kadınları - The Ottoman Palace Women* (1985), *Suna Korad: Türk Operası'nın Sönmeyen Yıldızı, Türkçe-Fransızca Büyük Sözlük, İsmet İnönü: Türkiye Cumhuriyeti'nin İkinci Cumhurbaşkanı, Türk Tiyatrosu'nun Sönmeyen Yıldızları: Necdet Mahfi Ayral-Jeyan Ayral Tözüm, Bulgaristan ve Türk-Bulgar İlişkileri, Arpaçay ve Yöresi* (1984), *Türkiye'de Kadın, Cilt I "Osmanlı Döneminde İstanbul Kadınları"* (1984), *Türkiye'de Kadın, Cilt II "Osmanlı Saray Kadınları"* (1985), *Geleneksel Türk Süsleme Sanatında Bir Kadın Sanatçı* (1985) գիրքերը:

Թուրքագետանը մահացել է 13 Դեկտեմբեր 2016ին, Ստամբուլում:

<<<